

**ՍԵՐԱՍԻՒԱՆ ՇԱՀՈՒՄԵԱՆԻ ԵՐԿԱՍԻՒՃԱՆ  
ՀԵՂՈՅԹԱԲԱՆԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆԸ  
ՎԱՐԴԱՆ Զ. ՊԵՏՐՈՍԵԱՆ  
vz.petrosyan@mail.ru**

Հնչոյթաբանութեան տեսովթեան հիմնահարցերով գրաղուել են տարբեր լեզուաբանական դպրոցների ներկայացուցիչներ, սակայն յայտնի է, որ այդ գիտակարգի ձեւաւրումը առաւելապէս կապում է կառուցուածքային լեզուաբանութեան, մասնաւրապէս՝ Պրահայի դպրոցի և ամերիկեան նկարագրական լեզուաբանութեան (descriptive linguistics) ներկայացուցիչների գործունեութեան հետ: Հնչոյթաբանութիւնը (phonology) ձեւաբանութեան (morphology), աւելի ճիշտ՝ ձեւոյթաբանութեան (morphemics) հետ միասին դիտում էր լեզուաբանութեան այն բնագաաաներից մէկը, որում աւելի հեշտ էր կիրառել կառուցուածքային լեզուաբանութեան սկզբունքները, ի տարբերութիւն, օրինակ, բառագիտութեան, յատկապէս՝ իմաստաբանութեան<sup>1</sup>: Այս առումով կառուցուածքային լեզուաբանութեան աւանդական կենտրոններից հետեւողական էին յատկապէս դանիական դպրոցի ներկայացուցիչները, որոնց, սակայն, առաւելապէս գրաղեցրել է ընդհանուր լեզուաբանական տեսովթին մշակելու գաղափարը: Ուստի նրանք հնչոյթաբանական (phonemic) թիշ թէ շատ ամբողջական ուսմունք չստեղծեցին: Դանիական կառուցուածքաբանութիւնը ամէնից հետեւողականը եղաւ Ֆերդինանտ Դյ Սոսիփի «Լեզուն ծեւ է եւ ոչ թէ սուրստանց» կանխադրոյթը կիրառելու հարցում: Սակայն 1960ականներին կառուցուածքային լեզուաբանութեան նոր սերնդի ներկայացուցիչներին, որոնց շարքերը համարելու յայտ էր ներկայացրել նաև Սերասիւան Կ. Շահումեանը, լեզուական կառուցուածքը բացայացնելու առումով այլևս չին գոհացնում աւանդական դպրոցների կողմից կիրառուող մեթոդները եւ նրանց հետեւողականութիւնը: Շահումեանը դրանով է բացատրել ինչպէս երկասդիման հնչոյթաբանութեան (այսուհետեւ՝ ԵՀ), այնպէս էլ կառուցուածքային լեզուաբանութեան նոր կաղապարի մշակման անհրաժեշտութիւնը<sup>2</sup>:

ԵՀի ամբողջական շարադրանքը Շահումեանը ներկայացրել է «Problemy Teoreticheskoy Fonologii» («Տեսական հնչոյթաբանութեան հիմնահարցերը»)<sup>3</sup> գրքում, ապա զարգացրել է յետագայում հրապարակած յօդուածներում:

1) Հնչոյթաբանական ուսմունքները դասակարգելով երեք տեսակի՝ ֆիզիկական, յարաբերակցային-ֆիզիկական և յարաբերակցային, Շահումեանի կարծիքով իր ժամանակի գիտութեան չափանիշներով հետաքրքրութիւն են ներկայացնում միայն երկրորդ և երրորդ տեսակներին վերաբերողները, իսկ առաջինները (Լեւ Վ. Շերբա<sup>4</sup> և Դանիէլ Ջոոնզ) այլևս ունեն միայն պատմական նշանակութիւն: Շահումեանը զոտ պատմական նշանակութիւն է վերագրում նաև հնչոյթի (phoneme) հոգերանական հայցակարգին՝ ի դէմ Բոդուէն Դը Կուլտունէի և է. Սեպիրի հնչոյթաբանական պատկերացումների: Երկրորդ տեսակին են վերաբերում Նիկոլայ Ս. Տրուբեցկոյի<sup>5</sup>, Լուի Ելմալեի<sup>6</sup>, Ուիլեամ Թուտէի<sup>7</sup> հնչոյթաբանական հայցակարգերը, ինչպէս նաև 1950ականներին ԱՄՆում Ռոման Եակորսոնի, Գինար Ֆանտի, Մորիս Հալէի և եւ Շեմի Կողմից մշակուած երկատումային հնչոյթաբանութիւնը<sup>8</sup>:

2) ԵՀի գիսատր առանձնայատկութիւնը վերացարկման երկու՝ դիվարկման և կոնստրուկտի (construkt, կառոյցք) աստիճանների տարրերակումն է, ըստ որոնց ընութագրում են լեզուական միատրները: Այս սկզբունքը Շահումեանը փոխառել է «ֆիզիկայի և միա վերացական տեսական գիտութիւնների» ոլորտից (18): ԵՀի մեթոդաբանական հիմքը վարկածային-արդարական մեթոդն է (hypothetical-deductive method): որպէս ընդհանուր գիտական մեթոդ: Վարկածային-արտածական մեթոդի համար նշում է երկու հիմնական առանձնայատկութիւն. 1) այն «պահանջում է որոշակի տեսական հիմնախնդրի լուծմանը ենթակայ փաստերի խիստ ընտրութիւն» (19), 2) նրա կիրառումը «յանգեցնում է ոչ այնքան նոր փաստերի բացայացումնը, որքան արդէն յայտնի փաստերը նոր լոյսի ներքոյ լուսաբանելուն» (20): Դիտարկման աստիճանում ընելի են ֆիզիկական, նիւթական ընութագիր ունեցող միատրներն ու իրողութիւնները (օր.՝ հնչինները/sound), իսկ կառոյցքի աստիճանում՝ անմիջականօրէն ոչ դիտարկելի, այսինքն՝ վերացական միատրներն ու իրողութիւննե-

որ (օր.՝ հնչոյթները): Սա այն հիմնական սկզբունքն է, որով ԵՀՇ տարբերում է հնչոյթաբանական միա հայեցակարգերից: Ի տարբերութիւն հնչոյթաբանութեան միաստիճան հայեցակարգերի (այդպիսիք են համարում միա բոլոր տեսութիւնները), որոնցից որոշների՝ հնչոյթին տրուած բնութագրերում առկայ է ֆիզիկական բաղադրիչը (հմմտ. օր.՝ բաշխական, ձայնաբանական-արտարերական եւ գործառական տեսութիւնները<sup>9</sup>), երկաստիճան հայեցակարգում հնչոյթներ են համարում «այն բաղադրիչները, որոնք իրենց մէջ ֆիզիկական ոչինչ չեն պարունակում» (35): Այլ խօսքով, ըստ երկաստիճան հնչոյթաբանական հայեցակարգի (ԵՀՀ)՝ հնչոյթները գիտական վերացարկումներ են: Հնչոյթները վերացական միատրներ է համարում նաև Տրութեցկոյը, որովհետեւ նրա կարծիքով դրանք խօսքում կիրառուող որոշակի հնչինների լեզուական համարժեքներն են եւ յաճախ հնչոյթաբանական մէջ միատրի մէջ համատեղում են ձայնաբանական զգալիորէն տարրեր բաղադրիչներ (հմմտ. «Հնչինները երբեք բուն հնչոյթները չեն, որքանով հնչոյթը չի կարող պարունակել հնչոյթաբանորէն ոչ-էական ոչ մի գիծ, ինչը խօսքի հնչինի համար փաստորէն անխոսափելի է: Որոշակի հնչինները, որոնք լսում են խօսքում, աւելի շուտ հնչոյթների նկատմամբ խորհրդանշիչներն են»<sup>10</sup>): ԵՀՀում հնչոյթները ոչ միայն վերացական, այլև բացառապէս յարաբերակցային միատրներ են, այն է՝ կառոյցքներ<sup>11</sup>, այսինքն՝ «գիտութեան չփիտարկուող առարկաների մասին հասկացութիւններ», որոնք կանխադրում են «տարրական հասկացութիւնների հետ այսպէս կոչուած համապատասխանութիւնների սկզբունքի ճանապարհով» (34), իսկ «Հնչինները ուղղակի դիտարկմամբ տրուած բաղադրիչներ են, որոնք ծառայում են հնչոյթների սուբստրատներ» (35):

Վերացարկման երկու տարրեր աստիճանների պատկանող միատրների՝ հնչինների եւ հնչոյթների միջեւ կապ ստեղծելու համար կանխադրում է յասուկ «վարկածային յարաբերութիւն», որին Շահումեանը տախիս է «մարմնատրման յարաբերութիւն» անուանումը՝ «մարմնատրում» եղրոյթ փոխառելով կիրեռների կայի ոլրոտից (35): Հնչոյթների եւ հնչինների միջեւ մարմնատրման յարաբերութեան կանխադրումը նրան հիմք է տախիս խօսելու նոր որակի հնչինների առկայութեան մասին, որոնք «ոչ

թէ պարզապէս ֆիզիկական բաղադրիչներ են, այլ յարաբերակցային-ֆիզիկական բաղադրիչներ», այսինքն՝ դարձեալ որոշակի վերացարկումներ: Դրանց նա տալիս է «հնչոյթային սուբստրատներ» անուանումը: Այդպիսով, նա տարբերակում է հնչինի հասկացութիւնը, հնչոյթային սուբստրատի հասկացութիւնը եւ հնչոյթի հասկացութիւնը. որոնցից առաջնները ֆիզիկական բաղադրիչներ են, երկրորդները՝ յարաբերակցային-ֆիզիկական բաղադրիչներ, իսկ երրորդները՝ «մաքուր յարաբերակցային բաղադրիչներ, այսինքն՝ կառոյցքներ» (37): Այսպէս, է՛ յաջորդականութիւնը մարմնատրում է երեք հնչոյթային սուբստրատ (տՏ(«Ծ») խսպաներէնում եւ լեհերէնում, տ(«Ե») ու Տ(«Ծ») անզերէնում եւ գերմաներէնում: ԵՀԻ անհրաժեշտութիւնը հիմնատրելու նպատակով Շահումեանը նշում է միաստիճան տեսութիւններին, մասնաւորապէս, Տրուբեցկոյի եւ Ելմսեփի հնչոյթաբանական հայեցակարգերին բնորոշ հնչոյթի փոխակերպման (transposition) եւ հնչոյթի յարացուցային (paradigmatic) ու շարակարգային (sintagmatic) նոյնականացման անսինումիաները (հակօրինութիւններ) եւ առաջարկում դրանց յաղթահարման հնարատրութիւններն ըստ երկաստիճան տեսութեան: Այսպէս, 1) հնչոյթաբանական եւ ոչ-հնչոյթաբանական հակադրութիւնների, 2) հնչոյթաբանական միատրի՝ որպէս հնչոյթաբանական հակադրութեան անդամի, 3) հնչոյթի՝ որպէս տուեալ լեզուի տեսանկինից անտրոհելի նուազագոյն միաւորի մասին Տրուբեցկոյի հիմնարար դրոյթները յանգեցնելով՝ 1) «հնչոյթները նշանակողների տարբերակմանը ծառայող բաղադրիչներ են» եւ 2) «հնչոյթները ծայնաբանական բաղադրիչներ են» դրոյթներին (24), Շահումեանը նշում է, որ Եթէ առանձնաբար այդ դրոյթները ճիշտ են, ապա ամբողջութեան մէջ դրանք հակասում են մէկը միամին, որովհետեւ «Եթէ ճիշտ է, որ հնչոյթները ծայնաբանական բաղադրիչներ են, ապա այդտեղից հետեւում է, որ նրանք չեն կարող փոխակերպուել ֆիզիկական սուբստրանցի այլ ձեւերի, այլապէս նրանք կը դադարեն լինել իրենք, այսինքն՝ ծայնաբանական բաղադրիչներ» (24): Ըստ Շահումեանի, ԵՀԸ այլ տեսական դժուարութիւնը յաղթահարում է՝ վերացարկման երկաստիճան մեթոդի կիրառումն եւ ֆիզիկական (=սուբստրանցիոնա) միատրի՝ հնչինի եւ յարաբերակցային միատրի՝ հնչոյթի միջեւ

կանխադրելով յարաբերակցային-ֆիզիկական բաղադրիչը՝ հնչյային սուբստրատը:

Ինչպէս հնչյոյթը, այնպէս էլ յարացուցային եւ շարակարգային հակադրութիւնները համարելով «առաջնային, չորոշակիացող հասկացութիւններ»՝ նա առաջարկում է հետեւեալ օրէնքը. «.... ցանկացած հնչյոյթ պիտի հակադրութեան մէջ գտնուի առնուազն մէկ հնչյոյթի նկատմամբ յարացուցային առանցքի վրա եւ առնուազն մէկ հնչյոյթի նկատմամբ շարակարգային առանցքի վրա» (37):

Այս առնչութեամբ պիտի նկատել, որ Շահումեանը, յատոյթային մակարդակում տարբերակելով հնչարանական բաղադրիչների վերացարկման երկու աստիճան, իրականում տարբերակում է հնչարանական երեք միաւոր, որոնցից մէկը՝ «հնչյոյթային սուբստրատը», կապող՝ միջանկեալ օդակի դեր է կատարում միա երկուսի միջեւ:

3) Հնչյոյթաբանական այլ տեսութիւններում (գործառական, բաշխական են) ընդհանուր առմամբ հնչյոյթի եւ նրա կիրառական տարբերակի (= հնչինի, այլահնչակի, փոփոխակի են) յարաբերակցութիւնը դիտում է որպէս դասի եւ նրա որոշակի ներկայացուցիչ յարաբերակցութիւն. հնչյոյթն ընկալում է որպէս հնչինների դաս: Ըստ ԵՀ՝ հնչյոյթի եւ հնչինի (կամ՝ այլահնչակի/*allophone*) միջեւ յարաբերակցութիւնը չի կարող լինել դասի եւ նրա անդամի, այսինքն՝ սերի եւ տեսակի յարաբերակցութիւն, որովհետեւ դրանք պատկանում են վերացարկման տարբեր աստիճանների: Հնչյոյթ-հնչին անցման շահումեանական սխեման բազմաշերտ է. այլահնչակի հասկացութիւնը փոխարինելով հնչյոյթակերպի (*phonemoid*) հասկացութեամբ՝ դիտարկման աստիճանում նա գերադասում է խօսել «որոշակի հնչյոյթակերպի» եւ «Վերացարկուած հնչյոյթակերպի» մասին, որոնցից առաջինը անհատական հնչինն է՝ որպէս «անհատական հնչյոյթի սուբստրատ» (ա<sub>1</sub>, ա<sub>2</sub>, ա<sub>3</sub>...), իսկ երկրորդը՝ անհատական հնչինների դասն է՝ որպէս «նոյնական անյատական հնչյոյթների սուբստրատ» (ա): Կառոյցքների աստիճանում դրանց համապատասխանում են «որոշակի հնչյոյթները» («ա<sub>1</sub>», «ա<sub>2</sub>» «ա<sub>3</sub>», ...) եւ «Վերացարկուած հնչյոյթը» («ա») (46): Ըստ այդմ՝ «անցուած հնչինի հասկացութիւնից հնչյոյթի հասկացութեանը տեղի է ունենում անհատական հնչ-

իններից դեպի անհատական հնչոյթները՝ անհատական հնչոյթային սուբստրատների միջոցով» (41):

Բաղադրիչների առանձնացման նշուած սկզբունքը հետեւղականօրէն կիրառում է ինչպէս Ենթահակոյթային (subsegmental), այնպէս էլ Վերյափոյթային (supersegmental) մակարդակներում: Ենթահատոյթային մակարդակում ԵՀԸ հնչարանական որոշակի կարգավիճակ է վերագրում «տարրերակիչ տարրերին» (կամ տարրերակիչ յատկանիշներին): Միմեանցից տարանջատելով ձայնաբանական յարկութիւնը եւ բարրերակիչ բաղադրիչը՝ կառոյցի աստիճանում սահմանազատում են «որոշակի տարրերակիչներ» («T<sub>1</sub>», «T<sub>2</sub>», «T<sub>3</sub>»...) եւ «վերացարկուած տարրերակիչ» («T»), իսկ դիտարկման աստիճանում «որոշակի տարրերակիչներպեր» (T<sub>1</sub>, T<sub>2</sub>, T<sub>3</sub>...) եւ «վերացարկուած տարրերակիչակերպ» (T) (52): Վերհատոյթային մակարդակում Շահումեանը տարրերակում է կումինափորի (culminator)<sup>12</sup> հասկացութիւնը, որի տարատեսակներն են առոգանոյթը (prosodema) եւ երաժշտականութիւնը (musicality, musicalness): Առոգանոյթը «ազդանշանում է, թէ որքան բառոյթներ, բառեր կամ բառերի խմբեր կան խօսքային հոսպնթացում», երաժշտականութիւնը «ազդանշանում է, թէ որքան են հնչոյթաբանական վանկերը խօսքային հոսպնթացում» (74):

4) Վարկածային-արտածական մեթոդը հնչոյթաբանական վերլուծութեան մէջ կիրառելիս Շահումեանն առաջնորդում է հնչոյթի եւ նշանակութեան (=իմաստի), լայն առումով՝ հնչոյթի եւ լեզուական նշանի (marker) յարաբերակցութեան այն պատկերացումով, ըստ որի՝ հնչոյթները լեզուում ծառայում են ոչ թէ նշանակուողների (signified), այլ՝ նշանակողների (signifier, signifier) դարրերակմանը: Դա նյուպէս ԵՀԸ հայեցակարգային դրոյթներից է, որով այն սահմանազատում է հնչոյթաբանական այլ ուսմունքներից: Ի տարրերութիւն մինչեւ 1950ականները մշակուած տեսութիւնների, որոնք, անկախ հնչոյթի բնորոշման ելակետից կամ առհասարակ նրան վերագրուած յատկութիւններից, ընդհանուր առմամք հնչոյթի բնութագրական յատկանիշը կամ դրանցից մէկն են համարում աւելի բարձր մակարդակի միաւոր(ներ)ի՝ ծեւյթի եւ բարի կազմում իմաստառարերակիչ դեր ունենալը (Դր Կուլտուրնէ, Շերբա, Բլումֆիլդ, Տրուբեցկոյ եւ ուրիշներ), ապա

ըստ ԵՀի՝ հնչոյթը ծառայում է համեմատուող միատրների հնչիւնական պատեանների՝ նշանակողների (եւ ոչ թէ՝ նշանակուողների) տարրերակմանը<sup>13</sup>: Աղդիսի շրջադարձի համար հիմք են եղել, մի կողմից, հնչոյթաբանական տարրեր ուսմնաքններում (Տրուբեցկոյի, Ելմալեևի, Շոտոդէյի) նկատուած անտինոմիաները (դրանցից մէկին մենք անդրադարձանք), միս կողմից՝ լեզուներում առկայ բառային կրկնակները (*doubles*) (իմմտ. ոռուերեն կրյոկ-կրյոկ՝ «կուպա, պուլիկ», *tsell oo loza-tselli loza*՝ «թաղանթանիք», *drofa-drokha*՝ «թռչուն» մեծ արոս», *sistern-tsistern*՝ «ցիստեն», *matras-matrats*՝ «ներքնակ» են. <sup>14</sup>). որոնք ակնյայտ հակասութեան մէջ են հնչոյթի՝ իբրեւ յմաստատարրերակիչ միատրի ընորոշման հետ: Ուստի, ըստ Շահումեանի, նպատակայարմար է, որ նշանակողների նոյնութիւններն ու տարրերութիւնները սահմանեիս հնչոյթաբանութիւնը յմաստաբանական չափորոշիչները փոխարինի «խօսողների լեզուաբանական պահուածքի չափորոշիչներով» (16):

ԵՀՆ «խօսողների լեզուաբանական պահուածքի տուեալները» դիտում է ելակէտային փաստեր, «որոնց համար մենք բացատրութիւններ ենք փնտոու հնչոյթաբանական տուեալների միջոցով»: Լեզուաբանական պահուածքի փաստերը, ըստ Շահումեանի, «խորքային լեզուաբանական օրինաչափութիւնների տրամաբանական հետեանք են, որոնք անհրաժեշտ է բացայատել խիստ լեզուաբանական վերլուծութեան ճանապարհով» (17): Միաժամանակ նա առաջարկում է գործառական հնչոյթաբանութեան մէջ կիրառուող «հնչոյթաբանական հակադրութեան» հասկացութիւնը փոխարինել «կոնտրաստի» հասկացութեամբ: Պիտի ասել, որ այդ երկու հասկացութիւններն էլ նա փոխառել է ամերիկան կառուցուածքային լեզուաբանութիւնից (Զ. Հառիս, Զ. Հորէտ), մասնաւորապէս՝ նրա մի դրսեւորումը համարուող սերող լեզուաբանութիւնից (Նորմ Չոմսկի), որը նոյնպէս առաջարկում էր լեզուն բացառապէս ծեային չափորոշիչներով վերլուծելու սկզբունքները<sup>15</sup>:

Որ հնչոյթաբանական վերլուծութեան յմաստային չափորոշիչը բացարձակ ընդգրկում չունի, վերոյիշեալ օրինակներից բացի, վկայում են նաև համանունները, որոնց յմաստային տարրերակումը պայմանաւորուած է խօսքային իրավիճակով (իմմտ.

[zastavit'] 1. «մէկին ստիպել մի բան անել» և 2. «ցանկապատել, ծածկել» (=zagaratit'), vyderzhka 1. «ամրութիւն» և 2. «մէջթում», metr 1. «100 սանտիմետր», 2. «քանաստեղծական չափ» և 3. «ուսուցիչ» են՝ ոռուերէնում,- right- 1. «իրաւոնք», 2. «աջ կողմը», 3. «աջ հայեացքների տէր», rifle- 1. «հրացան», 2. «կողոպտել» են՝ անզիւդինում,- դար- 1. «հարիւմանեակ» 2. «լեռան գագաթ», 3. «հագուատ» 4. «միասին, հետը» են՝ հայերէնում): Սակայն, դրանով հանդերձ, հնչոյթների իմաստատարերակիշ հակադրութիւնը լեզուարանական չափորոշիչ է եւ լուրջ չափորոշիչ: «Խօսողների լեզուարանական պահուածքը» ոչ միայն հնարաւոր չէ լեզուարանական չափորոշիչ համարել, այլև բաւականին առաջական, ոչ-յստակ եւ, մասնաւրապէս հնչոյթարանութեան ոլորտում, գործնականում դժուար կիրառելի հասկացութիւն է:

5) Չնայած որ իբրև գիտակարգ՝ հնչոյթարանութիւնը ծեսաւորուել է յատկապէս կառուցուածքային լեզուարանութեան ներկայացուցիչների ջանքերով, բայց եւ այնպէս, ըստ Շահումեանի, ոչ-բոլոր հնչոյթարանական ուսմոնքները կարող են համարուել իսկապէս կառուցուածքային: Կառուցուածքային մօտեցումը պահանջում է, որ բոլոր բաղադրիչները «դիտարկուեն միայն որպէս որոշակի յարաբերութիւնների հատման կիտ, բաղադրիչի միա բոլոր բնութագրերը կառուցուածքային տեսանկինից էական չեն» (85): Լեզուական կառուցուածքի նոյնպիսի պատկերացում է ընկած նաեւ կոպենհագընեան լեզույթարանութեան (glossematics) հիմքում<sup>16</sup>: Ուստի ոչ-պատահականօրէն հնչոյթարանական հայեցակարգերից մէկը, որի հետ ԵՀԸ շիմնան ընդհանուր եղուր է դրսեւորում, հենց լեզույթարանկական հնչոյթարանութիւնն է, չնայած որ, ինչպէս արդէն ասուեց, լեզույթարանները հնչոյթարանական ամբողջական տեսութիւն չեն ստեղծել, այլ հնչոյթարանութեան հարցերին անդրադարձել են ընդհանուր լեզուարանական (=լեզույթարանկական) տեսութեան շրջանակներում: Ինչպէս հնչոյթը, այնպէս էլ լեզուական միաւորները, առհասարակ, ելմվենեան լեզույթարանութեան մէջ բնորոշում են մի կողմից՝ նշանային յարաբերութեան, միա կողմից՝ լեզուական կառուցուածքում յարաբերութիւնների տեսանկինից: Լեզուական նշանը կամ «նշանային արտայայտութիւնը» Սոսիփի հետեւորութեամբ բնորոշելով որպէս «երկկողմանի էութիւն»<sup>17</sup>, Ելմակեւը առաջա-

դրում է՝ ֆիգուրի՝ որպէս նշանի բաղադրիչի գաղափարը։ Ըստ Ելմալեկի՝ ֆիգուրն ունի միայն արտայայտովթեան հարթակ։ Ֆիգուրներ են վանկերը եւ հնչոյթները, որոնք, չունենալով բովանդակութեան հարթակ, մասնակցում են բովանդակութեան հարթակ ունեցող միաւորների, օր՝ բառերի կազմադրմանը։ Լեզույթաբանովթեան առանցքային դրոյթներից մէկը բովանդակութեան հարթակի ծեւերի տարրերակումն է։ Ըստ այդմ, ֆիգուրները եւա, չնայած որ ունեն միայն արտայայտովթեան հարթակ, որպէս նշանի բաղադրիչներ՝ գործառում են երկու հարթակներում էլ<sup>18</sup>։ Ի տարրերովթին Ձունզի դպրոցի (Լոնդոնի դպրոց), որը, հնչոյթի տարրերակիշ դերն ընդունելով հանդերձ, այն չի ներառում սահմանումի մէջ, որ նոյնն է, թէ հիմնական չի համարում հնչոյթային բնութագրի համար, Ելմալելը պրահացիների նման ոչ միայն հակուած է յատուկ նշանակութիւն տալու «տարրերակիշ չափորոշիչն» որպէս միակ էականի», այլև այն համարում է Պրահայի խմբակի գլխաւոր ծառայութիւնը<sup>19</sup>։ «Տարրերակիշ» (distinctive) լեզույթը լեզույթաբանութեան մեջ գործածում է լայն առունով՝ նկատի ունենալով լեզուական երկու հարթակների ծեւերը։ Հետեւարար ֆիգուրներին բնորոշ է նաև իմաստարրերակիշ գործառոյթը՝ որպէս նշանի բովանդակային հարթակի բաղադրիչ։

Ըստ Շահումեանի՝ հնչոյթի լեզույթաբանական հայեցակարգի «կարեւոր նուաճումը լեզուաբանական գիտովթեան մէջ» այն է, որ հնչոյթը դիտում է «մաքուր յարաբերութիւնների բաղադրիչ, որը ներկայացում է հնչիւններով», բայց եւ որը իր մէջ ֆիգիկական ոյինչ չի պարունակում։ Նա հնչոյթի լեզույթաբանական հայեցակարգի բացթողումն է համարում «տարրերակիշ բաղադրիչները» լեզուի ֆիգիկական սուբստանցին վերագրելը եւ ըստ այդմ դրանք հնչոյթաբանովթեան ուսումնասիրութեան շրջանակից դուրս թողնելը։ Իսկ դրա պատճառը լեզույթաբանովթեան մէջ «վերացարկման երկու ասդիճանների՝ դիրարկման ասդիճանի եւ կառոյցքների ասդիճանի բացայալը կերպով (explicit) սահմանազարման բացակայութիւնն է», որի կիրառման դէպքում տարրերակիշ բաղադրիչները կը դասուին կառոյցքների շարքում<sup>20</sup>։

Հնչյոթի երկաստիճան եւ լեզույթաբանական հայեցակարգերի միջեւ ընդհանրութիւնը առաջին հերթին պայմանաւորուած է նրանց համար ընդհանուր մեթոդական հիմքի՝ արտածական (deductive) մեթոդի առկայութեամբ, որը, ըստ Ելմվելի, առաջին անգամ ինքն է կիրառել լեզուաբանական վերլուծութեան մէջ<sup>21</sup>: Սակայն, ինչպէս երեսում է վերը ներկայացրածից, այդ երկու տեսութիւնները տարրերում են մի կարեւոր հանգամանքով՝ իմաստագրարթերակիշ գործոնի նկատմամբ վերաբերնունքով, որը հիմնական բնութագրիչ է հնչյոթի լեզույթաբանական հայեցակարգում եւ, ընդհակառակն, անընդունելի է ԵՀԻ համար:

Թուողիլի հնչյոթաբանական հայեցքների ամփոփումը Հնչյոթի Բնորոշման Շուրջ աշխատութիւնն է: Հնչյոթը բնորոշելով իրեւ բացասական, յարաբերական վերացարկում, որը գոյութիւն ունի միայն որպէս յարաբերակցութեան անդամ, իսկ հնչյոթաբանական համակարգը՝ ոչ թէ հնարաւոր կաղապար, այլ միայն որպէս հնչյոթաբանական յարաբերութիւնների գումար, Թուողիլը, ըստ էութեան, հնչյոթը համարում է «վերացական անիրական միաւոր»: Հնչյոթը բնորոշելով որպէս միաւոսակ կազմակերպուած դասերի միաւոսակ կազմակերպուած անդամ՝ նա տարրերակում է «մակրոհնչյոթներ /macrophoneme/ (հնչյոթային դասերը) եւ միկրոհնչյոթներ /microphoneme/ (դասերի անդամները)»: «Հնչյոթաբանութէն նուազագոյն կերպով տարրերուող ծեւերի դասերի անդամների միջեւ յարաբերութիւնները» համարելով «նուազագոյն հնչյոթաբանական տարրերութիւններ»՝ Թուողիլը միկրոհնչյոթը բնորոշում է իրեւ «ծեւերի միջեւ նուազագոյն հնչյոթաբանական տարրերութեան» անդամ<sup>22</sup>: «Միկրոհնչյոթները, որպէս այդ նման եւ փոխ-միանշանակ տարրերութիւնների անդամներ, նման ծեւով կարգաբերուած են դասերի մէջ»: Ուստի նա մակրոհնչյոթները բնորոշում է իրեւ «ծեւերի միջեւ նման նուազագոյն հնչյոթաբանական (յարաբերութիւնների) տարրերութիւնների» բոլոր նման ծեւով կարգաբերուած անդամների (միկրոհնչյոթների) գումար»<sup>23</sup>: Այսպէս, [ր1]ը թիւով [ր1] «Պեղահատ» եւ [ր2]ը ոպում [ոչը] «նիրի, նիրիել» միկրոհնչյոթներ են, որոնց միաւորմը <P> մակրոհնչյոթի մէջ ոչ թէ հնչման առարկայական նմանութեան արդինք է, այլ յարաբերութիւնների համամասնութեան: Միկրոհնչյոթի եւ մակրոհնչյոթի յա-

րաբերութիւնը հիմնուած է արտայայտութեան հարթակի բնութագրիչների վրայ: Աղքանով իսկապէս հնջյօթի թուրդէլեան ըմբռնուան ընդհանրութիւն է դրսետրում ԵՀ հետ: Սակայն, ինչպէս լեզույթաբանութիւնից, Թուրդէլի հնջյօթաբանական պատկերացումներից ես իմաստատարբերակիշ գործոնը լիովին օտարուած չէ: Համեմատուող, աւելի ճիշտ՝ յարաբերուող բաղադրիչները, այդ թուամ հնջյօթը, բնորոշելով «ծե» ընդհանուր անուանումով՝ Թուրդէլը գրում է. «Նոյնական համարուող ծեւերը համապատախանում են հնջինաբանորէն իմաստակիր (ընդգծ.՝ Վ.Պ.) նման դէպերին: Այդպիսի ծեւերը կոչում են հնջյօթաբանորէն նմաններ»<sup>24</sup>: Ապա. «Բացառութեամբ համանունների, տարբեր համարուող ծեւերը համապատասխանում են հնջինաբանորէն իմաստակիր (ընդգծ.՝ Վ.Պ.) տարբեր դէպերին: Այդպիսի ծեւերը կոչում են հնջյօթաբանորէն տարբերներ»<sup>25</sup>:

Երկատումային դասակարգման (ԵԴ) հեղինակները հարազատ են մնում հնջյօթի՝ որպէս տարբերակիշ յատկանիշների փնջի բնորոշմանը<sup>26</sup>, որը, ըստ ամենայնի, դեռևս «Պրահայի խմբակի» գործունէութեան շրջանից Եակորսոնի մօտ ամրապնդուած համոզում է Եղել: Սակայն, ի տարբերութիւն գործառական հնջյօթաբանութեան ներկայացուցիչների, որոնք տարբերակիշ կամ հնջյօթաբանական յատկանիշ ասելով նկատի են ունենում արտաբերական յատկանիշները, Եակորսոնը եւ համահեղինակները տարբերակիշ յատկանիշների մէջ ներառում են նաև ձայնաբանական յատկանիշները: Ըստ այդմ, նրանք հնջյօթները բնորոշում են ըստ «Կրոնտրաստ» ծեւալրոր 16 յատկանիշների, որոնցից 4ը *առողանական* են (prosodic), իսկ 12ը համարում են ներքին (inside) յատկանիշները: Առողանականները տարբերակում են ըստ գրոնի, ուժի, քանակութեան, շեշտի և երկարութեան միջնութիւնապակցուածութեան յատկանիշների: Ըստ էութեան, կարեւոր են յատկապէս ներքին որակուածները: Վերջիններն իրենց հերթին բաժանում են երկու տեսակի՝ 1) հնչեղութեան յարկանիշների (ձայնալոր-ոչ ձայնալոր, բարձայն-ոչ բաղաձայն, հաւաք (compact)-ոչ պարզորոշ (diffuse), լարուած-ոչ լարուած, ձայնեղ-խոլ, ոնզային-բերանային, ընդհատուած-ցնդհատուած, կորուկ-ոչ կորուկ, կոկորդայնացած-չկոկորդայնացած) եւ 2) գրոնի յարկանիշների (ցածր-բարձր, կիսվարային (flat)-

պարզ, կիսվերային (sharp)-պարզ<sup>27</sup>: Թուարկուած յատկանիշներից իսկ երեսով է, որ հնչյոյների տարբերակումը, աելի, քան որեւէ տեսութեան մէջ, հիմնուած է ֆիզիկական տուրստանցի վրայ: Աելին, Ե՞Դի հեղինակները մերժում են հնչյոյի թուրդեան ըմբռնումը, ըստ որի՝ հնչյոյները «լեզուի վերացական, ոչ իրական միատրներ»<sup>28</sup> են: Ի տարբերութիւն որոշ հնչյոյթարանների, որոնք հնչյոյթարանութեան եւ հնչինարանութեան քննութեան ոլորտները սահմանազատելու, նրանց ուսումնասիրութեան բուն առարկաները տարբերակելու եւ վերջապէս նրանց ինքնուրոյնութիւնը շեշտելու համար կարեւորել են այդ երկու գիտակարգերի գէթ պայմանական տարանշատումը<sup>29</sup>, Ե՞Դի հեղինակները, ընդհակառակն, հնչյոյթարանական իրողութիւնների բացայատման համար կարեւորում են հնչինարանութեան դերը<sup>30</sup>: Այս առումով, թերեւս, ԵՀի եւ ԵԴի միջեւ՝ իրեւ հնչյոյթարանական հայեցակարգերի, ընդհանրութիւնն աւելի մեծ է, քան ԵԴի եւ գործառական հնչյոյթարանութեան միջեւ, Ներառեալ երկու՝ Պրահայի եւ Մուկուայի դպրոցները, երկու վերապահումով. 1) ի տարբերութեան ԵՀի, ԵԴն միաստիճան հայեցակարգ է, 2) ԵԴն հնչյոյի քննութեան նկատմամբ ունի «ներքին» (inside) մօտեցում, ի տարբերութիւն հնչյոյթարանական այլ հայեցակարգերի, այդ թում ԵՀի, որոնց մօտեցումը, ըստ էութեան, «արտաքին» (outward) է:

6) Կառուցուածքի ըմբռնումը հիմնարար նշանակութիւն ունի կառոյցըներով գործառող բոլոր տեսական գիտութիւնների համար: ԵՀի՝ որպէս իրականում կառուցուածքային հնչյոյթարանական ուսմունքի կառուցուածքարանական նկարագիրը, ըստ Շահումեանի, ապահովում է վերացարկման կառոյցըների աստիճանը, որովհետեւ ոչ-դիտարկելի առարկանները հնարաւոր է քննել միայն որպէս կառոյցըներ: ԵՀի տեսանկիւնից «հնչյոյթարանական իրողութիւնների ճիշտ նկարագրութիւնը իր մէջ չպիտի պարունակի որեւէ այլ քան, խորհրդանիշների վերացական գործառութիւնների համակարգուած նկարագրութիւնից բացի» (86): Գործառոյթի հասկացութիւնը Շահումեանը կիրառում է «Վերացական տեսական համակարգերում խորհրդանիշների գործառոյթների» նշանակութեամբ՝ եզրակացնելով, որ ցանկացած տեսական հասկացութեան քննորոշումը պիտի յանգի «խորհրդանիշների գործառոյթների հաւաքուծուի ցուցումի» եւ դրանում է

«կառուցուածքային նկարագրութեան էովթինը» (87): Յարաբերակցային-ֆիզիկական հնչյոյթաբանական տեսութիւնները, Շահումեանի կարծիքով, չեն բաւարարում կառուցուածքային նկարագրութեան պահանջներին, որովհետեւ հասկացութիւնները, որոնցով նրանք գործառում են, ազատուած չեն ֆիզիկական սուբստանցից: Ըստ ԵՀԻ հեղինակի, կառուցուածքային լեզուաբանութեան երկաստիճան տեսութեան ուժին անցնում է Սոսիդի «Լեզոն ձեւ է եւ ոչ թէ սուբստանց» յեղափոխական դրոյթից բոլոր կարեւոր հետեւութիւնների հետեւողական դուրս բերման միջով (87):

ԵՀԻ՝ որպէս հնչյոյթաբանական հայեցակարգի սոյն քննութիւնը բաւարար իմբը է տալիս հետեւեալ եզրակացութիւնների համար:

1) Կառուցուած լինելով վերացական տեսական (այդ թուա՞բնական) գիտութիւններում լայնօրէն կիրառուող վարկածային-արդարական մեթոդի սկզբունքներով՝ ԵՀՆ ինքն էլ նախորդող փոփի հնչյոյթաբանական տեսութիւնների համեմատութեամբ ձեռք է բերել խիստ վերացական տեսական նկարագիր: Անչյոյթաբանական բոլոր ուսմունքներից այն ամենից յետեւողականն է Եղել սոսիդեան վերոյիշեալ կանխադրոյթը կիրառելու հարցում: Աւելի հետեւողական, քան լեզույթաբանութիւնը եւ նկարագրական հնչյոյթաբանութիւնը: ԵՀՆ հակուած էր դէպի իր ժամանակի նորարական լեզուաբանական ուղղութիւնը՝ սերող լեզուաբանութիւնը (generative linguistics), որը, իրեն ամերիկեան կառուցուածքային լեզուաբանութեան դրսեւորումներից մէկը, լեզոփի կառուցուածքաբանական քննութիւնը նոյնացնում էր նրա ձեւայնացուած քննութեան հետ: Շահումեանի՝ դէպի սերող լեզուաբանութիւնը հակուածութեան լրացուցիչ վկայութիւն է նրա հետեւեալ միտքը: «Փոխակերպական քերականութեան տեսական նշանակութիւնը կայանում է նրա վիրթսարի բացատրողական, համադրողական ուժի մէջ: Փոխակերպական քերականութեան առանցքը լեզոփի միջովի մասին գաղափարն է, որը բաղկացած է պարզագոյն լեզուաբանական կառուցուածքներից, որից կարող են դուրս բերուել շատ կամ քիչ բարդութեան բոլոր միևս լեզուաբանական կառուցուածքները»<sup>31</sup>: Այսինքն, ի դէմս սերող լեզուաբանութեան՝ Շահումեանը տեսնում էր այն, ինչը նրա կարծիքով պակասում էր

կառուցուածքային լեզուարանութեան աւանդական ուղղութիւններին:

2) ԵՀՆ երբեւս ստեղծուած ամբողջական, հետեւողական եւ ինքնատիպ հնչոյթարանական ուսմունքներից է: Այն ներառում է ինչպէս հասոյթային, այնպէս էլ վերհատոյթային հնչոյթարանական մակարդակների բոլոր կարեւոր իրողութիւնները եւ փորձում է ԵՀԻ դիրքերից պատասխանել այդ գիտակարգին առնչուող հիմնական հարցադրումներին: Ինչպէս որեւէ նոր տեսութիւն, ԵՀՆ նոյնպէս հրապարակ է իշել նախորդող տեսութիւնների խոցելի կողմերը յաղթահարելու յաւակնութեամբ, սակայն պիտի նկատել, որ, արժեքաւոր գաղափարներ առաջարկելով հանդերձ, դէպի լեզուի ծեսայնացուած (=իմաստային կողմից կտրուած) նկարագրութիւնն իր դրսեւորած հետեւողական հակուածութեամբ գրեթէ խօման է հասցնում հնչինարանական եւ հնչոյթարանական հարթակների միջեւ յարաբերակցութիւնը: Կառոյցքի՝ որպէս սուբստանցից, այսինքն՝ նիւթական իրականութեան բաղադրիչից բացարձակօրէն կտրուած միատրի ըմբռնումը հնչոյթարանական հարթակի միատրները (հնչոյթը, վերացարկուած հնչոյթակերպը, կուպմինատորը եւն) կտրում է իրենց նիւթական հիմքերից եւ վերածում հնարանքների: Ճիշտ է՝ կառոյցքի հասկացութիւնը կոչուած է տեսական կառուցուաների միջոցով բացատրելու լեզուական իրողութիւնները, բայց իենց բացատրելու եւ ոչ թէ փոխարինելու դրանց: Մեր կարծիքով լեզուարանութեան ուսումնասիրութեան նիւթը պիտի լինեն բուն լեզուական իրողութիւնները, իսկ կառոյցքները պիտի վերաբերեն անդրլեզուարանութեանը (metalinguistics), քան բուն լեզուարանութեանը:

3) Ինչպէս Շահումեանի կողմից առաջարկուած ԵՀՆ, այնպէս էլ առհասարակ նրա կառուցուածքարանական տեսութիւնը, որի ամբողջական շարադրանքը հերինակի Կառուցուածքային Լեզուարանութիւն մենագրութիւնն է, առաջարկուած գաղափարների թարմութեամբ եւ ինքնատիպութեամբ չեն զիջում իր ժամանակի նոյնարնոյթ տեսութիւններին, ուստի ամէնեփն էլ պատահական չպէտք է համարել, որ ժամանակակիցներից ոմանք չեն վարանել կառուցուածքային լեզուարանութեան մէջ ընդունելու շահումեանական դպրոցի գոյութեան փաստը<sup>32</sup>, իսկ Մուկովեան գործառական հնչոյթարանութեան հայրերից Ալեքսանդր Ռեֆորմատուկին,

ակնարկելով 1950ականներին հնչյոթի հասկացութեան շուրջ Սերգէ Ի. Բեռնշտէյսի հետ բանավեճում Շահումեանի անզիջում կեցուածքը<sup>33</sup>, վերջինիս «յիխորտացող» պահուածքի ետեւում տեսել էր վաղուայ ինքնատիկ լեզուարանին<sup>34</sup>:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- <sup>1</sup> Տե՛ս՝ V. G. Gak, “Leksikologiya // Linguisticheskiy Entsiklopedicheskiy Slovar” (Քառագիշուուրին // լեզուարանական հանրագիտական բառարան), Մուսկուս, «Sovetskaya Entsiklopedia», 1990, էջ 260:
- <sup>2</sup> Տե՛ս՝ S. K. Shahumyan, *Sovremennoe Sostoyanie Dvukhstupenchatoy Teorii Fonologii. Issledovaniya Po Fonologii* (Հսչյոթաբանութեան երկաստիճան տեսութեան ժամանակակից վիճակը. հնչյոթաբանական ուսումնասիրութիւններ), Մուսկուս, «Նաուկա», 1966, էջ 3. Նաեւ նոյնի՛ S. K. Shahumyan, *Strukturnaya Linguistika* (Կառուցուածքային լեզուարանութիւն), Մուսկուս, «Նաուկա», 1965, էջ 14: Շահումեանը իր ժամանակակից կառուցուածքային լեզուարանութեան թերութիւնն է համարուա այն, «.... որ մի կողմից լեզուի կառուցուածքը դիտում է որպէս վարկած լեզուի խորցային կապերի մասին, իսկ միաւից՝ կառուցուածքային լեզուարանութիւնը նոյնացում է կայական լեզուարանութեան հետ: .... Որպէսզի ժամանակակից կառուցուածքային լեզուարանութեան մէջ ընդունուած կառուցուածքը ըմբռնումը կարողանայ իսկապէս արդինաւէտ լինել, անհրաժեշտ է վերանայել կառուցուածքային լեզուարանութեան առարկայի մասին հարցը» (նոյն, էջ 15):
- <sup>3</sup> S. K. Shahumyan, *Problemy Teoreticheskoy Fonologii* (Տեսական հնչյոթաբանութեան հիմնահարցերը), Մուսկուս, «IAN SSSR», 1962: Այս գրքին յղումները տրում են բոլն շարադրանքու:
- <sup>4</sup> Լենինգրադի (Ս. Պետրովուգի) դպրոցի հնչյոթաբանական ուսմունքը մենք որպէս ենք որպէս ծայնաբանական-արդարերական (Վ. Զ. Պետրոսեան, «Հսչյոթի Գաղափարի Ակգնաւորումը Եւ Հսչյոթաբանական Գիտակարգը», *Ընդհանուր Եւ Հայ Լեզուարանութեան Հարցեր*, Երեան, Փրինթինֆո, 2015, էջ 60-82): Մեր կարծիքով այդ երկու բնորոշումների միջեւ հակասութիւն չկայ. Կրանց տարրերութիւնը լայնի (Շահումեաննը) և ների (մերը), այլ եզրոյթանույթեամբ՝ սեղի և գետակի յարաբերակցութիւն է:
- <sup>5</sup> N. S. Trubetskoy, *Osnovi Fonologii* (Հսչյոթաբանութեան հիմունքներ), Մուսկուս, «Aspekt press», 2000:
- <sup>6</sup> Lui Yelmslev, “Prolegomeny Teorii Yazika” (Լեզուի տեսութեան նախագիտելիքներ), *Novoe V Linguistike*, I issue, Մուսկուս, «ИЛ», 1960, էջ 264-389:
- <sup>7</sup> W. F. Twaddell, *On Defining the Phoneme*, Language Monograph, N 16, Baltimore, «RIL», 1935:
- <sup>8</sup> R. Jakobson, Gunar M. Fant, M. Halle, “Vvedenie V Analiz Rechi” (Խօսքի վելումնութեան ներածութիւն), *Novoe V Linguistike*, II issue, Մուսկուս, «ИЛ», 1962, էջ 173-230. Նաեւ՝ R. Jakobson, M. Halle, “Fonologiya I Yeyo Otnoshenie K

Fonetike” (Հայոցարանութինը եւ նրա յարաբերութինը հնչինարանութեանը) *Novoe V Linguistike*, II issue, Մոսկով, «ИЛ», 1962, էջ 231-278. Նաեւ՝ E. Cherry, Halle, R. Jakobson, “K Voprosu O Logicheskem Opisanii Yazikov V Ich Fonologicheskem Aspektakh” (Լեզուների տրամարանական ռատոմասիրութեան հարցի մասին՝ նրանց հնչյութարանական հայցակերպում), *Novoe V Linguistike*, II issue, Մոսկով, «ИЛ», 1962, էջ 279-298:

- 9 Գործառական տեսութիւններից ֆիզիկական տուրտանցի, այն է՝ հնչինական նիւթի հետ հնչյութի յարաբերակցութինը աւելի շեշտուած է՝ մասկվեան դպրոցի Ներկայացուցիչների կողմից տրուած բնորոշումներով (A. A. Reformatskiy, *Vvedenie V Yazkovedenie* (Լեզուարանութեան ներածութին), Մոսկով, «Prosveshchenie» Հրատ., 1967, էջ 211), քան Պրահայի դպրոցի (*Trubetzkoy*, էջ 43):
- 10 Trubetzkoy, նոյն:
- 11 Կառոյցները՝ (կոնստրուկտներ) հասկացութիւններ են գիտութեան ոչ-դիտարկելի առարկաների մասին, որոնք կանխադրում են դիտարկումը տրուած փաստները բացատրելու համար: Կոնստրուկտի հասկացութիւնը լեզուարանութեան մէջ լայնօրէն կիրառուել է 1970-ականներին՝ ըստ էլութեան, յանգեցնելով լեզուական միասորի և նրա մասին պատկերացման տրամագծորէն հակառակի ըմբռումների: Կառոյցը շահումեանական ըմբռումներ շատ մօտ է, եթէ չասենք՝ նոյնական է, Վ. Ա. Շուեգինցեի պատկերացումը, որում ես նոյնացում են լեզուական միատրը և նրա մասին լեզուարանական պատկերացում՝ կոնստրուկտը (V. A. Zvegintsev, *Yazyk I Linguisticheskaya Teoriya* (Լեզուն եւ լեզուարանական տեսութիւնը), Մոսկով, 1973, էջ 15): Լեզուական միատրի այսպիսի ըմբռումնական դէմ առարկել են Ֆ. Բերեզին (F. M. Berezin, B. N. Golovin, *Obshchee Yazikoznanie* (Ընդհանուր լեզուարանութիւն), Մոսկով, «prosveshchenie» Հրատ., 1979, էջ 10-11):
- 12 Հայոցարանական բաղադրիչ, որն ունի գագաթնակէտային գործառոյք:
- 13 Համաման տեսակելի է արտայատել նաև եռ. Ստեպանովը (Yu. S. Stepanov, *Osnovy Obshchego Yazikoznaniya* (Ծանհանոր լեզուարանութեան հիմնեններ), Մոսկով, «prosveshchenie» Հրատ., 1975, թ. 81-82):
- 14 Օրինակներն ըստ O. S. Akhmanova, *Ocherki Po Obshchey Lexikologii* (Ծանհանոր բառագիտութեան ակնարկներ), Մոսկով, «GUPIMP RSFSR», 1957, էջ 197: Այս գրքից են նաև Ծահնամանի կողմից թերուու օրինակները: Այդպիսից են նաև հայերէնի դարպաս-դարբաս, հոնկուր-հոնգուր, զ(ը)րօգերու կրկնակները: Ռուսերէնում այսպիսի բառերի թիւն շատ աւելի մեծ է:
- 15 N. Chomsky, “Sintaksicheskie Struktury” (Հարահուսական կառուցվածքներ), *Novoe V Linguistike*, II issue, Մոսկով, «ИЛ», 1962, էջ 412-527. Նաեւ նոյնի՝ “Logicheskie Osnovi Linguisticheskoy Teorii” (Լեզուարանական տեսութեան տրամարանական հիմնենները), *Novoe V Linguistike*, IV issue, «ИЛ», էջ 465-575:
- 16 L. Yelmslev, “Ponyatie Upravleniya” (Կառավարման սմբռումը)՝ *Istoriya Yazikoznaniya XIX-XX Vekov V Ocherkakh I Izvlecheniyakh* (XIX-XX դարերի

լեզուարանութեան պատմութինը ակնարկներով եւ քաղուածըներով), խմբ.<sup>1</sup> V. A. Zvegintsev, P. Մաս, Սոսկուա, «prosveshchenie» Հրատ., 1965, էջ 101). Նաեւ՝ L. Yelmslev, *Metod Strukturnovo Analiza V Linguistike* (Կառուցուածքային վերլուծութեան մեթոդ) լեզուարանութեան մէջ) *Istoriya Yazikoznaniya XIX-XX Vekov V Ocherkakh I Izvlecheniyakh* (XIX-XX դարերի լեզուարանութեան պատմութինը ակնարկներով եւ քաղուածըներով), խմբ.<sup>2</sup> V. A. Zvegintsev, P. Մաս, Սոսկուա, «prosveshchenie» Հրատ., 1965, էջ 108):

<sup>17</sup> Yelmslev, Prolegomeny, էջ 316:

<sup>18</sup> Նոյն, էջ 324:

<sup>19</sup> Նոյն, էջ 323:

<sup>20</sup> Shahumyan, *Problemy*, էջ 57:

<sup>21</sup> Yelmslev, Prolegomeny, էջ 321:

<sup>22</sup> Twaddell, էջ 39:

<sup>23</sup> Նոյն, էջ 39:

<sup>24</sup> Նոյն, էջ 38:

<sup>25</sup> Նոյն:

<sup>26</sup> St'v' Jakobson, Halle, էջ 245:

<sup>27</sup> Նոյն, էջ 254-258: Ըստ Ստեպանովի, ինչպէս առհասարակ 1950ականներին առաջարկուած համբոնիանոր երկատումային դասակարգումները, Եակրոստնի, Ձանտի և Հայէի կողմից մշակուած դասակարգումը ես փորձում է: «հաշուի առնել բոլոր հնարաւոր խօսքային հնչինները, որպիսիք միայն ունակ է արտաքերելու մարդը», իրականում, սակայն, երկատումային դասակարգումը քացայատում է միայն հնչինատիպերը, որովհետեւ իրական խօսքում արտաքերուող հնչինների միջեւ տարբերութինը ոչ թէ: «կամ մէկը-կամ միաւ» սկզբունքով է, այլ՝ աստիճանական հակառակութեամբ (Stepanov, *Osnovi*, էջ 68-69):

<sup>28</sup> Jakobson, Halle, էջ 240:

<sup>29</sup> Trubetskoy, էջ 21:

<sup>30</sup> Jakobson, Halle, էջ 235-236:

<sup>31</sup> S. K. Shahumyan, «Teoreticheskiye Osnovi Transformatsionnoy Grammatiki» (Փոխակերպական ցերպականութեան տեսական հիմնները), *Novoe V Linguistike*, IV issue, Սոսկուա, «ИЛ», 1962, էջ 408:

<sup>32</sup> St'v' O. S. Akhmanova, E. A. Afonov, V. Davidov, *K Voprosu O Sushchnosti I Metayazike Sintaxicheskoy Fonetiki* (Չարահիւսական հնչինարանութեան անդրեզոնի և էութեան հարցի մասին), *Issledovaniya Po Fonologii* Հրատ., Մոսկուա, 1966, էջ 219:

<sup>33</sup> Ա. Կ. Շահումեանն այդ բանավէճին մասնակցել է: «Problema Fonemu» (Հնչյույթի հիմնահարցը) յօդուածով՝ *Izvestiya, AN SSSR, OLY*, XI v., 4 issue:

<sup>34</sup> St'v' A. A. Reformatskiy, *Iz Istorii Otechestvennoy Fonologii* (Հայրենական հնչյութարանութեան պատմութինից), Մոսկուա, «Nauka», 1970, էջ 37:

---

THE TWO-LEVEL THEORY OF PHONOLOGY OF SEBASTIAN SHAHUMYAN  
(Summary)

VARTAN Z. BEDROSSIAN  
vz.petrosyan@mail.ru

Two-level phonology, elaborated by S. K. Shahumyan, was an early innovation in the phonological system, which was already rich in different conceptual approaches. The following features are typical of two-level phonology. 1) the use of the *hypothetical-deductive method* as a general scientific basis, in contrast to other theories at the basis of most of which lies the *inductive method*, 2) the use of the construct as the notion of scientific abstraction in the phonemic analysis and, according to this, the differentiation between the two levels of abstraction - *the stage of observation* and *that of constructs*, in contrast with the other theories of the phoneme, which are characterized by the one-level approach. 3) the import of the concept of "linguistic behavior" as a means of phoneme-distinction, in contrast with other theories, most of which (even the ones which give preference to the formal side of the phoneme) to some extent take into consideration the meaning-differentiating factor when differentiating between the phonemes. 4) the wholeness, i.e. two-stage phonology includes the two levels of phonemic analysis – *the segmental level* and *the suprasegmental one*. 6) the succession - two-stage approach, which lies at the basis of the analysis, is used in succession in the analysis of subphonemic, phonemic and supraphonemic phenomena. It should be considered that the vulnerable point of two-level phonology is the use of the notion of construct as that of scientific abstraction towards the phoneme and other constituents, which not only deprives the latter of their linguo-speech bases, but also puts in question the appropriateness of their study in general.